ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ


**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**

**Բաց Բաժնետիրական Ընկերություն**

**ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am**


**Հաշվետվություն թիվ 103, 27.08.2015թ.**

| | | | |
|---|---|---|---|
| տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ | բաժնետոմս, | պարտատոմս | պարտատոմս |
| արժեթղթերի քանակը՝ | 1,277,501 հատ, | 40,000 հատ | 200.000 հատ |
| արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 5,000 ՀՀ դրամ, | 10,000 ՀՀ դրամ | 25 ԱՄՆ դոլար |

*"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և սպառիչ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":*

ստորագրող անձինք՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| **Կարեն Հակոբյան** | **Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ** | | 27.08.15 |
| **Զարուհի Մելքոնյան** | **Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ** | | 27.08.15 |
| **Սուրեն Կարապետյան** | **Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ** | | 27.08.15 |
| **Տիգրան Գալստյան** | **Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ** | | 27.08.15 |
| **Բագրատ Ճգմաչյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալի** | | 27.08.15 |
| **Դավիթ Հարությունյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 27.08.15 |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| **Աշոտ Օսիպյան** | **Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն** | | 27.08.15 |

27 օգոստոսի 2015 թ.

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաղրամյան մասնաճյուղ ստեղծելու վերաբերյալ հաստատելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2015 թվականի օգոստոսի 26-ի թիվ 10/01 Լ որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհրդի որոշումը կցվում է):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ տնօրինություն

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ.փոստ՝
araratbank@araratbank.am

**ք.Երևան**

**Կոդ:ՈՐԽ0102 – 10/01 Լ**
**Դաս: ՀՊ**
**« 26» օգոստոսի 2015թ.**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված $21^{6}$-ի 1-ին մասի ժդ) և ժը) կետերը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1 կետի ժդ) և ի) ենթակետերը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. ՀՀ, Արմավիրի մարզ, ՀՀ ԶՈՒ Բաղրամյան զորավարժարան հասցեում 2015 թվականի սեպտեմբերի 28-ից մինչև 2015 թվականի հոկտեմբերի 05-ը գործունեության ժամկետով ստեղծել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաղրամյան մասնաճյուղ:
2. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաղրամյան մասնաճյուղի կանոնադրությունը՝ համաձայն Հավելվածի:
3. Հանձնարարել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Գործադիր տնօրեն Ա.Օսիպյանին ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաղրամյան մասնաճյուղի գրանցման հետ կապված գործընթացը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Խորհրդի նախագահ՝** **Բ. Բեգլարյան**

**Իսկականի հետ ճիշտ է**
**Աշխատակազմի ղեկավար՝** Մ.Ուզունյան

ADMINISTRATION
АДМИНИСТРАЦИЯ

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ. փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

Կոդ: ՀՐՄ0201 - 1057/Ա
Դաս: ԾԳ
"12" օգոստոսի 2015 թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

## Հ Ր Ա Մ Ա Ն

### ԱՇՈՏ ՕՍԻՊՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի Հոդված 158-ը և Հոդված 163-ը, "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, "Բանկերի և բանկային գործունեության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված $21^{10}$-ի 3-րդ մասի բ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 14.9 կետի բ) ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանին տրամադրել 10.10.2013-09.10.2014թ.թ. ընկած ժամանակահատվածի համար հասանելիք հերթական արձակուրդի 24(քսանչորս) աշխատանքային օրը՝ 2015 թվականի օգոստոսի 17-ից մինչև 2015 թվականի սեպտեմբերի 17-ը ներառյալ:
   Հիմք՝ Աշոտ Օսիպյանի 2015 թվականի օգոստոսի 12-ի դիմումը:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը դնել Գործադիր տնօրենի տեղակալ Դավիթ Հարությունյանի վրա:
3. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Հաշվապահական հաշվառման վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Աշոտ Օսիպյանի արձակուրդի վճարումը:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ ԱՇՈՏ ՕՍԻՊՅԱՆ